

գործողութիւն յանձնաբարեր է . ի՞նչ ընէ : Ալ ուրիշ ի՞նչ կայ ընկլու : Եթէ հիւանդութիւնը կուրազետապ է , պէտք է կուրազին հանել , այլապէս բորբոքումը կարող է տարածուիլ փորի մէջ և մեռնիլ : Վիրարոյժը կը կարէ ոչ թէ որովհետև անպէտք է , այլ վտանգաւոր : Փտախտաւոր ոտքը կը կարէ , որպէսպի փտութիւնն ու նեխումը չթունաւորեն մարմինը , բորբոքած աչքը կը հանէ , երբ յստակ կ'ըլլայ որ միւս աչքն ալ պիտի վտանգուի ևայլն :

5. Եւ վերջապէս կան հիւանդութիւններ , որոնց համար բժշկութիւնը առայժմ զարման չունի : Օր . քաղցկեղը — կանսէրը — երբ յառաջցած է , տարածուած է մարմինի զանազան խուլերի մէջ , յատկապէս կուրծքի և որովայնի , այդ պարագային գործողութիւնն անդամ օգուտ չունի : Այդ հիւանդը սահմանուած է աստիճանաբար հիւծելու և մահանալու : Ի հարկէ , երբ քաղցկեղը կը ներկայանայ բժշկին իր սկզբնական շրջանին մէջ , այն ժամանակ յոյսի դռները կը բացուին : Վիրարուժութիւնը՝ շատ շրջահայեաց կերպով արմատախիլ կ'ընէ հիւանդութիւնը և կ'աղատէ հիւանդը մարդկութեան այդ մեծագոյն պատուհանէն :

Այս բոլորի հետ կը փափաքէի շեշտել այն , որ հիւանդութեան յաղթողը հիւանդի մարմինն է , անոր դիմագրական կարողութիւնն է : Հասարակ սկրդուկ մը կարող է մարդը մեռցնել հակառակ լաւագոյն բժիշկներու և վիրարոյժներու ջանքերուն :

Բժ . ԵՐ . ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

ԱՅՈԼ ԹԷ ԽՆԴԱԼ

Թրքախօս հայ կին մը , մօտ 35 տարեկան : Ներս կը մտնէ ու կը նստի բաղկաթոռին վրայ :

— Ի՞նչ ունիք , Տիկին :

— ?

— Կը հաճի՞ք ըսել թէ որ տեղերնիդ կը ցաւի :

— Քննեցէք և կը հասկնաք :

— Խնդրեմ Տիկին , կ'ըսեմ քիչ մը անհամբեր , ի՞նչ բանի համար կ'ուղէք որ ձեզ քննեմ :

Վայրկեան մը խորհելէ ետք .

— Տէ հայտէ ըսեմ , թէկ որոշած էի բան մը չըսել , որպէս զի քննելով դուք իսկ հասկնայիք ցաւս . . .